

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 05

«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ

06.12.2014թ. գիտական խորհրդի նիստի

Նախագահ՝ Վ. Գրիգորյան

Քարտուղար՝ Թ. Խաչատրյան

Գիտական խորհրդի 58 (հիսունութ) անդամից ներկա էին 46-ը (քառասունվեց):

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Օտար լեզուների ֆակուլտետի 2013-2014 ուստարվա հաշվետվություն:

Զեկ.՝ օտար լեզուների ֆակուլտետի դեկան Թ. Մելիքյան

2. Պատմաբանասիրական ֆակուլտետի 2013-2014 ուստարվա հաշվետվություն:

Զեկ.՝ պատմաբանասիրական ֆակուլտետի

դեկան Ս. Հայրապետյան

3. Ընթացիկ հարցեր:

3.1 Լեզվի կենտրոնի դասընթացներին ԳՊՄԻ-ի դասախոսների մասնակցության հարց:

Հաղ.՝ ռեկտոր Վ. Գրիգորյան

3.2 Էլեկտրոնային դասընթացների կառուցման համար անհրաժեշտ հմտությունների ձևավորմանն ուղղված դասընթացներին ԳՊՄԻ-ի դասախոսների մասնակցության հարց:

Հաղ.՝ ռեկտոր Վ. Գրիգորյան

3.3 ԳՊՄԻ-ի «Գիտական տեղեկագիր» հանդեսի 2014թ., №1 Ա և Բ պրակների հրատարակության երաշխավորելու մասին:

Հաղ.՝ Գիտության և արտաքին կապերի

գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյան

Ռեկտոր Վ. Գրիգորյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 46 անդամ. կողմ՝ 46, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

1.ԼՍԵՑԻՆ.- Թ. Մելիքյանի զեկուցումը օտար լեզուների ֆակուլտետի 2013-2014 ուստարվա գործունեության մասին /Հաշվետվությունը՝ կից/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ռեկտոր Վ. Գրիգորյանը, Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյանը, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ս. Ալեքսանյանը:

Վ. Գրիգորյանին զարմացրեցին ռուսաց լեզու մասնագիտության առկա ուսուցման չորրորդ կուրսի ուսանողների առաջադիմության ցածր ցուցանիշը:

Թ. Մելիքյանը ուսանողների առաջադիմության ցածր ցուցանիշը հիմնավորեց հայերենի ցածր լեզվաիմացությամբ, որը խոչընդոտում է ուսումնառության գործընթացին:

Վ. Գրիգորյանը նաև անդրադարձավ գիտական աշխատանքների ոչ բավարար քանակին: Բացի դրանից, խորհուրդ տվեց գիտական գործունեություն ծավալելիս այլ բուհերի մասնագիտական ամբիոնների հետ կառուցել համագործակցություն, որը համատեղ ծրագրերի իրականացման հիմք կհանդիսանա: Ֆակուլտետի համար դրական փոփոխություններից հիշատակեց առողջ մթնոլորտի առկայությունը, որն օգնում է ֆակուլտետում առաջացած խնդիրների օպերատիվ լուծմանը:

Ա. Ֆարմանյանն անդրադարձավ մի քանի ելակետային խնդիրների. 1.Այլ ՀՀ բուհերում ԳՊՄԻ-ի բակալավրի որակավորում ստանալուց հետո ուսանողների կրթության շարունակմանը, 2.Ֆակուլտետի դասախոսների միջև գիտական աշխատանքների անհավասարաչափ բաշխվածությանը, 3.Վերջին տարիներին գերմաներեն, ֆրանսերեն մասնագիտությունների գծով դիմորդների կտրուկ նվազմանը:

1-ին հարցի կրտվածքով դեկանը նշեց, որ այլ ՀՀ բուհերում իրենց կրթությունը շարունակող ԳՊՄԻ-ի բակալավրի շրջանավարտները ցանկանում են փոխել իրենց մասնագիտությունը: Ընդ որում, ուսանողների կողմից ընտրված նոր մասնագիտությունները բացակայում են մեր ինստիտուտում: Ինչ վերաբերում է հաջորդ երկու

խնդիրներին, ապա այդ ուղղությամբ նա ևս հաստատեց, որ անելիքները շատ են:

Այնուհետև ֆակուլտետում նկատելի փոփոխություններից Ա. Ֆարմանյանն ընգծեց փաստաթղթաշրջանառության բարելավումը՝ հատկապես բարձր գնահատելով անգլերեն լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի աշխատակիցների մեծ ներդրումը:

Ս. Ալեքսանյանը նկատեց, որ Թ. Մելիքյանը համակարգում է ֆակուլտետում ընթացող աշխատանքները պատշաճ մակարդակով և առաջարկեց դեկանի գործունեությունը հաշվետու ժամանակահատվածում գնահատել բավարար:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Օտար լեզուների ֆակուլտետի դեկանի 2013-2014 ուստարվա աշխատանքային գործունեությունը գնահատել բավարար, և որոշման նախագիծն ընդունել հիմք՝ արված առաջարկություններով հանդերձ:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 46 անդամ. կողմ՝ 46, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2.ԼՍԵՑԻՆ.- Պատմաբանասիրական ֆակուլտետի դեկան Ս. Հայրապետյանի զեկուցումը ֆակուլտետի 2013-2014 ուստարվա գործունեության մասին /Հաշվետվությունը՝ կից/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ռեկտոր Վ. Գրիգորյանը, Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյանը, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ս. Ալեքսանյանը:

Ս. Ալեքսանյանը գտնում է, որ դեկանը հաշվետու ժամանակահատվածում ծավալուն աշխատանք է կատարել և՛ կազմակերպչական, և՛ գիտական առումով: Նա առաջարկեց Ս. Հայրապետյանի կատարած աշխատանքը հաշվետու ժամանակահատվածում գնահատել բավարար:

Ֆակուլտետի առավելությունների մասին խոսելիս Ա. Ֆարմանյանն ընդգծեց պրոֆեսորադասախոսական կազմի երիտասարդացման ապահովումը, գիտական աստիճան, կոչում ունեցող դասախոսների բարձր ցուցանիշը: Թերություններից

հիշատակեց պրոֆեսորադասախոսական կազմի գիտական գործունեության ոչ բավարար մակարդակը:

Վ. Գրիգորյանը նշեց, որ ֆակուլտետի արդյունավետ գործունեությունն ակներև է: Նա կգարմանար, եթե ֆակուլտետը չդառնար ինստիտուտում անցկացվող միջոցառումների դրոշակակիրը, քանի որ այն ունի մասնագիտական ներուժ: Ուսանողների պատրաստվածությունը ևս խոսում է ուսումնառության արդյունավետության մասին: Այդ մասին բազմիցս արտահայտվել են ինստիտուտում հյուրընկալված հեղինակավոր հասարակական, քաղաքական ու մշակութային գործիչները: Ֆակուլտետի գործունեության համար նպաստավոր գործոններից մեկը համարեց Ս. Հայրապետյանի կողմից Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի ղեկավարումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Պատմաբանասիրական ֆակուլտետի ղեկանի 2013-2014 ուստարվա աշխատանքային գործունեությունը գնահատել բավարար, և որոշման նախագիծը, արված առաջարկություններով հանդերձ, ընդունել հիմք:
ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 46 անդամ. կողմ՝ 46, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3.1.ՄԵՑԻՆ.- Ընթացիկ հարցեր:

3.1.1.ՄԵՑԻՆ.- Լեզվի կենտրոնի դասընթացներին ԳՊՄԻ-ի դասախոսների մասնակցության հարցը (Հաղ.՝ ռեկտոր Վ. Գրիգորյան):

ՈՐՈՇԵՑԻՆ.- Լեզվի կենտրոնի դասընթացներին մասնակցելու համար հանձնարարել ամբիոնների վարիչներին մինչև ս.թ. դեկտեմբերի 20-ը ներառյալ ներկայացնել առնվազն 2 դասախոսի:
ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 46 անդամ. կողմ՝ 46, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3.2.ՄԵՑԻՆ.- Էլեկտրոնային դասընթացների կառուցման համար անհրաժեշտ հմտությունների ձևավորմանն ուղղված դասընթացներին ԳՊՄԻ-ի դասախոսների մասնակցության հարցը (Հաղ.՝ ռեկտոր Վ. Գրիգորյան):

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հանձնարարել ամբիոնների վարիչներին մինչև ս.թ. դեկտեմբերի 20-ը ներառյալ ներկայացնել առնվազն 2 դասախոսի՝ էլեկտրոնային

դասընթացների կառուցման համար անհրաժեշտ հմտությունների
ձևավորմանն ուղղված դասընթացներին մասնակցելու:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 46 անդամ. կողմ՝ 46, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3.3ԼՍԵՑԻՆ.- ԳՊՄԻ-ի «Գիտական տեղեկագիր» հանդեսի 2014թ., №1 Ա և Բ
պրակների հրատարակության երաշխավորելու մասին (Հաղ.՝
Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյան):

ՈՐՈՇԵՑԻՆ.- Երաշխավորել հրատարակության ԳՊՄԻ-ի «Գիտական տեղեկագիր»
հանդեսի 2014թ., №1 Ա պրակը (թվով 29 հոդված) և Բ պրակը (թվով 40
հոդված):

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 46 անդամ. կողմ՝ 46, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Գիտական խորհրդի նախագահ՝

Վ. Գրիգորյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Թ. Խաչատրյան